

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

# ՀԱՐՄԱՆԱԿԻ

## ՏՈՆԵ



891.715  
0-32

ԽՍՀՄ Հ-ՊԳ.ՈՒ.ՈՒՐԳԵՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ. ՀԲՈՒԱՐԱ. 1931

0-32.

33 MAY 2017

Ն. ՈԼԵՅՆԻԿՈՎ



ԶԱՐՄԱՆԱԾԻ ՏՈՒԾ




ԽՍՀՄ ԺՈՂՈՎՌՈՒԹՅՈՒՆԻ ԿԵՆՏՐՈՆ. ՀՐԱՄԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՄՈԽԿԱ

1931

02.09.2013

5589



Թարգմ. Լ. Բ.



Уполн. главлит № В-194      Заказ № 1.146      Тираж 5.000  
Книжная ф-ка Центриздана Народов СССР. Москва,  
Шлюзовая набережная, 10.

ԿՀ 969. 63

1.

Ամեն յերեկո մոտենում եյի  
յեղբորս սենյակի դռանն ու ականջ  
դնում:

Հաճախ նրա մոտ հավաքվում եյին  
զանազան մարդիկ ու բարձր խոսում:

Մի անգամ լսեցի.

— Դեն, տղերք, պատրաստվե-  
ցեք: Հաջորդ յերեքշաբթի տոն ե:

2.

Շարունակությունն այլևս չլսեցի:  
Վաղելով մյուս սենյակը, ցած  
ըերի պատի որացույցը. յեթե իս-  
կապես յերեքշաբթի որը տոն ե,  
նշանակում ե կարմիր պիտի լինի:  
Թերթեցի որացույցը: Ապրիլի 18-ը  
սկսվ եր գրված:

— Խաբել են, — մտածեցի:





Ու քիչ եր մնում, թե լաց լինելի  
հուզումից:

3.

Յես շատ եյի սիրում տոն որերը:  
Տասնմեկ տարեկան եյի դեռ,  
բայց աշխատում եյի գործարանում:  
«Աշակեբա»-ի գործ եյի կատարում.  
Դա նշանակում է, վոր գործով մի  
բաժնից մյուսը պիտի վազեյի շա-  
րունակ:

Ահա թե ինչու սիրում եյի տոն  
որերը:

4.

Պատահում եր, վոր աշնանից  
թերթում եյինք որացույցը և հաշ-  
վում, թե քանի կարմիր թիվ կա  
ծննդյան առթիվ:

Ծնունդ, զատիկ, հոգեգալուստո-  
լինում են նաև ցարական որեր՝  
ցարի անվանակոչություն, թագու-  
հու. նրանց ազգականների անվա-  
նակոչություն:



4

Այդ տոները կոչվում եյին «գա-  
հակալական» տոներ:

Մեր դոնապանը դարպասի վրա  
բարձրանալով կախեց դրոշակը, Յա-  
րական դրոշակը, Յերեք գույնի,  
Վերեկի շերտը՝ սպիտակ, մեջտեղինը՝  
կապույտ, ներքեկինը՝ կարմիր:

— Յերանի թագավորը շատ աղ-  
ջիկ ունենար, վոր շատանար տո-  
ների թիվը, — հառաչում եյի, —  
միայն թե շարունակ չվագվեյի  
մի ցեխից մյուսը:

5.


Մյուս որը դնացի գործարան:  
Այնտեղ ել լսեցի տոնի մասին:

Յերկու բանվոր կանգնել եյին  
դազգյանի մոտ. մեկն ասում եր:

— Զորս որից տոն ե, հարկա-  
վոր ե դրոշակներ պատրաստել:

Ել չկարողացա համբերել: Մո-  
տենալով զիսավոր վարպետ Գլեբ  
Իվանովիչին, հարցը:

— Գլեբ Իվանովիչ, իսկապես  
յերեքշաբթի տոն ե:



5

Նա դայբացած հարձակվեց վրաս  
ու գոռաց.

— Տոնի իշտա ունես, համ: Սպա-  
սիր, հենց այդ որը յես քեզ կան-  
տորի հատակները լվանալ տամ,  
շան լակոտ...

6.

Տանը, յեղբայրս ինձ մի անկյուն  
տանելով, ասաց.

— Ահա ինչ, Սյումա, դու պար-  
տավոր ես մեզ ոգնել: Շուտով  
տոն ե լինելու և մեզ անհրաժեշտ  
ե կարմիր կտոր ու ժապավեն: Դու  
այդ կարող ես մայրիկից ու քույ-  
թիկից գողաճալ: Միայն թե զգուշ-  
դրա մասին վոչ վոքի վոչ մի խոսք:

— Այդ ի՞նչ տարորինակ տոն ե,  
վոր թե որացույցում չի նշանակ-  
ված և թե Գլեք իվանովիչն ե բար-  
կանում, յերբ ուզում ես իմանալ  
ու չի ել կարելի ուրիշին ասել, —  
մտածում եյի զարմացած, — իսկ  
կարմիր ժապավեն նրանց ի՞նչին ե  
պետք:

7.

Մայրիկից թոցը յերկու կար-  
միր կտոր, իսկ քրոջս ծամերից՝  
ժապավենը. նա քնած եր և վոչինչ  
չիմացավ,

Այդ ամենը տվի յեղբորս:  
— Շատ ապրես, — գովեց նա ինձ:  
Ու ստացածը դրեց բարձի տակ,  
և կտորները, և ժապավենը:

8.

Ահա և տոնը:

Սուավոտ կանուխ, ժամի վեցին  
սուլեցին գործարանի շշակները:  
Նշանակում ե, հարկավոր ե աշխա-  
տանքի գնալ: Ուրեմն տոն չե: Տոն  
որերին շշակները չեն սուլում:

Մոտենում եմ իմ արհեստանո-  
ցին. լուռ ե: Դազգյահների մոտ  
վոչ վոք չկա:

Իսկ պատին փակցված ե բարակ  
թուղթ, վորի վրա զըլած ե կա-  
պույտ տառերով —



## 9.

Բավական ե:

Թողեք աշխատանիքը, ընկերներ: Շուսով դադարեցրեք անիվները:  
Տվեք ազդանեանը.

Լայն բացեք արհեստանոցի դրուերը: Դեպի փողոց, ընկերներ:  
Այսոր մեր մեծ տոնն ե:

## 10.

Իսկ հետո գրված եր այսպես —  
Այսոր մի առանձին տոն ե. այս  
տոնը նեանակված չե վոչ մի որա-  
ցույցում:

Այս տօնին չեն հնչելու յեկեկեցու  
զանգակները յեվ վոչ ել պատարագ  
ե լինելու:

Ո՞ւմ կողմից յեվ ո՞ւմ համար ե  
ստեղծված այս զարմանալի տոնը:

Ստեղծել են բանվորները յեվ մի-  
միայն բանվորության համար:

## 11.

Յես շարունակում եյի կարդալ,  
1899 թվին Պարիզում գումար-  
վեց ամբողջ աշխարհի բանվորու-  
թյան համագումարը:

Այդ համագումարին յեկել եյին  
յեվ գերմանացիք, յեվ անգլիացիք,  
յեվ ռուսները, յեվ օվեդները, յեվ

իտալացիք, յեվ լեհները: Վաս ե ապ-  
րում ամբողջ աշխարհի բանվորու-  
թյունը: Նրանք ածխատում են որե-  
կան 12-ից—14, նույնիսկ 16 ժամ:

Յեվ ահա համագումարը վարո-  
ւում ե —

Թող մայիսի մեկին ամբողջ աշ-  
խարհի բանվորությունը աշխա-  
տանիքը դադարեցնի յեվ դուրս զա  
փողոց ու ասիք՝

Պահանջում ենք ուրժամշա  
բանվորական որ:

Յեվ բող սրանից հետո մայիսի  
մեկը դառնա ամբողջ աշխարհի  
բանվորական տոնը:

## 12.

Դեռ կարդացածու, ինչպես պետքն  
ե, չեյի հասկացել, յերբ վազելով  
արհեստանոց մտավ Գլեբ Իվանո-  
վիչը: Տեսնելով, վոր ներսում մարդ  
չկա, զայրացած վոտները խփեց  
հատակին ու գոռաց:

Հարկավոր ե արձակել, ար-  
ձակել բոլոր բանվորներին: Զրիա-  
կերներ, լի որը տոնի յեն փոխել,

Ու շտապ մոտեցավ ինձ: Տես-  
նելով, վոր կարդում եմ, մի հար-



ված տվեց վղակոթիս, պոկեց պատի  
թուղթն ու գոռաց.

— Ի՞նչ ես գրածը կարդում.  
սիրտդ պատիժ ե ուզում, համ:

Այդ որը առաջին անգամ իմացա,  
վոր այդպիսի թուղթ կարդալու հա-  
մար բանտ են նատեցնում:

### 13.



Դարբասի մոտ հավաքվել եր  
բանվորությունը: Նրանց մեջն եր  
նաև յեղբայրս: Նա ձեռքին ուներ  
ցարական չորս դրոշակ:

— Բա մեր ե կարմիր դրոշակը,—  
հարցըց մեր ցեխի բանվորներից  
մեկը:

— Ահա ձեզ կարմիր դրոշակ,—  
պատասխանեց յեղբայրս, — ան-  
տառը տարեք:

— Բայց չե՞ վոր սրանք ցարա-  
կան են, զարմացած նկատեց հար-  
ցնողը:

— Վոչինչ, — ժպտաց նա, — ցա-  
րական եյին, կդառնան պըոլետա-  
րական: Տարեք:

### 14.

Դրոշակները վերցնելով՝ առաջ  
անցանք:

Մեզ հանդիպեցին վոստիկան-  
ները: Նրանցից վոչ մեկն ուշա-  
դրություն չդարձրեց մեզ վրա:

Միանգամայն հանգիստ դուրս յե-  
կանք քաղաքից: Յեվ յերբ հասանք  
անտառ, յեղբայրս վերցրեց դրո-  
շակները, պատուեց սպիտակ շեր-  
տերը, կապույտ շերտերը ու թո-  
ղեց միայն ներքեկինը՝ կարմիրը:

— Ահա և ձեզ կարմիր դրոշակ,—  
ասաց նա ուրախ:




### 15.

Հանկարծ լսեցի: Յերգում եյին:  
Դեռ յերբեք չեյլ լսել այդ յերգը:

Այս ճին աշխարհը կփորենք մենք  
Մինչեվ հիմքերը յեվ ճիսո  
Մեր նոր աշխարհը կօփնենք մենք,  
Ուր վոչ ստրոկ կա, վոչ դժգոհ:

Յերգում եյին շատերը, սակայն  
վոչ վոք չեր յերեռում: Մի հարյուր  
քայլ ելի առաջ անցանք ու հանկարծ  
յերեաց մեծ ձորը և այդ ձորում  
մարդիկ, ինչպես մըջյունի յերամ:



## 16.

Իսկ թլրի վրա, մեզնից մի քանի  
քայլ հեռու կանգնել եր ու մօրու-  
քով ու ակնոցավոր մի մարդ։ Գո-  
ռում եր ամբողջ կոկորդով։

— Ընկերներ, այսոր մենք տնօւմ ենք  
մեծ տներ, մայիսի մեկը։

— Ի՞նչ մայիսի մեկ, — հարցը ի-  
շեղբորս, այսոր դեռ ապրիլի 18-նե-  
թեղբայրս ծիծաղեց։

— Ռուսաստանումն ե դեռ ապ-  
րիլի 18-ը, Ամբողջ աշխարհում այ-  
սոր մայիսի մեկն ե։ Մեր որա-  
ցույցը սիալ ե։

## 17.

Բլրի վրա կանգնած մարդը նո-  
րեց գոռաց։

|| — Ընկերներ, այսոր ամբողջ աշխարհի  
բանվորությունն աշխատանքը բողած,  
կուռ շարժերով, դրուակներով ու նվա-  
զով անցնում ե փողոցներով, վորակեսզի  
բարոր տեսնեն նրա ուժը։ Մենք դեռ չենք  
կարող այլպիս անել։ Յերե մենք դրա-  
շակներով փողոց դուրս գայինք, մեզ  
կսպանեյին զինվորներն ու կձերքակա-

լեյին վոստիկանները։ Մենք դեռ սփա-  
ված ենք պահվել ահա այստեղ, ձորե-  
րում։ Սակայն կզա ժամանակ, յերբ  
կհաղթի բանվորությունը յեվ նրանից  
հետո այլեվս կարիք չի լինի ծածկվել վոս-  
տիկանության աչքից։

## 18.

Ցես հարցը ի յեղբորս։

— Ո՞վ ե խոսողը։

Դա կուսակցական ընկեր նե, բոլ-  
ցիկ։ Կոմիտեյից ե յեկել։

Ցես վոչինչ չհասկացա։ Ի՞նչ կո-  
միտե։ Ի՞նչ բոլցիկ։ Միայն մի  
բան ինձ համար պարզ եր, վոր  
դա մի ուրիշ մարդ եր։

Շարունակ նայում եյի նրա վրա  
ու զարմանում. այդպես ել բարձր  
ձայն կլինի։ Նա այնքան պարզ եր  
խոսում, վոր հասկացվում եր յու-  
րաքանչյուր բառը։

Հանկարծ նա գոռաց։

— Ընկերներ, անտառը մտեմ...  


## 19.

Լսում ենք — սուլոցի ձայներ,  
յերկար, յերկար։



Ամբոխը խոնվեց, Աղմկեց ամբոխը, Սկսեցին իրար կոխկրտելու հոետորը ձեռքը բարձրացնելով կանչեց:

— Ընկերներ, մի՛ վախենա՞ Անտառ մտե՞: Սակայն վոչ բոլորդ միասին:

Ասաց թե չե, բոլորը կանգ առան: Խաղաղվեցին:

Լսվում եր, ինչպես ճլվլում եյին ճնձուկները:

## 20.

Անտառի միջով կուզե-կուզ գուրս յեկանք մեծ ճանապարհի վրա ու այնտեղից խմբերով քաղաք վերադանք:

Մեր յետեից լսվում եր սուլոց, աղմուկ և ձիերի դոփյուն:

— Այդ հգ ե մեզ հետեւում, — հարցը յեղբորս:

— Կոզակներն ու վոստիկանները, — պատասխանեց նա. — Վոչինչ, անտառն այնքան խիտ ե, վոր նրանք չեն կարողանա ձիերով անց կենալ:

Այդպես ել յեղավ: Նրանք մնացին: Կատաղությունից կը ակեցին յերկու անգամ: Վախեցրին անտառի ազուավեցրին...

## 21.

Յերբ անցնում եյի մեր փողոցով, ձիավոր կողակներից մեկն ինձ հասավ:

Նա մի ձեռքում բռնել եր մտրակ, մյուսում կրկնակոշիկ:

## 22.

Այդ որվանից շատ ժամանակ և անցել:

1918 թվի մայիսի մեկին յես յեղա Մոսկվայում:

Դա արդեն հեղափոխությունից հետո յեր: Բոլոր որացույցներում այդ որը վոչ թե առաջվա պես սե, այլ կարմիր եր նշանակված:

Բոլշևիկներն ուղղել եյին որացույցը:

Ամբողջ Մոսկվան ծածկվել եր դրոշակներով: Մարդկանց գլխարկների և թերթի վրա ժպտում եր





Կարմիր ժապավենը։ Սուլում եյին  
շչակները։ Նվագում եր մուզիկան։

Ամեն կողմից հավաքվել եր ժո-  
ղովուրդը։ Հավաքվել եր վոչ թե ձո-  
րում, ինչպես առաջ, այլ Կարմիր  
հրապարակում, կրեմլի պատերի  
տակ։

### 23.

Բարձր ամբիոնի վրա յերեաց մի  
մարդ ու ձեռքը պարզելով, սկսեց  
ճառը։

— Ընկերներ, այսոր ամբողջ աշխար-  
հում բանվորությունը տոնում է մայիսի  
մելք, սակայն միայն մե՛նք կարող ենք  
այդ տոնն ազատ կատարել։

Թվաց, վոր լսել եյի այդ ձայնը։  
Հարցրի։

— Ո՞վ ե խոսողը։

— Ընկեր Լենինն է, — պատաս-  
խանսեց մեկը։

### 24.

Յես անմիջապես հիշեցի «կոմի-  
տեյից յեկած կուսակցականին»։  
Նա յերբեք չեր փոխվել։



5589

22876

ԳԻՐԱ  
8 ԿՈՊ.  
Цена коп.

X. 2.

ՀՐ 19/  
ԹՂ



---

Н. ОЛЕЙНИКОВ  
Удивительный  
праздник  
(перевод с русского)  

---

На армянском языке

---

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР  
Москва, центр, Никольская, 10.